ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի պատմության վերաբերյալ գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, ստեղծվել են ստվար հատորներ։ Դրանց հիման վրա Մ. Չամչյանը, Ն. Ադոնցը, Լեոն, Հ. Մանանդյանը և շատ ուրիշ պատմաբաններ շարադրել են հին դարերի և միջնադարի պատմության ընթացքը, իրենց գործերը հասցնելով XVIII դարի վերջին տասնամյակները կամ մինչև նոր պատմության սկիզբը։ Պատմական հիշյալ դարաշրջաններին են նվիրված նաև Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոնի դասախոսների ջանքերով իրրև ձեռնարկ ստեղծված և վերջերս հրատարակված «Հայ ժողովրդի պատմության» առաջին և երկրորդ հատորները։

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի XIX դարի և XX դարի երկու տասնամյակի ամբողջական պատմությանը, ապա, եթե հաշվի չառնենք ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի գիտնականների հրատարակած «Հայ ժողովրդի պատմության» ձեռնարկի երկրորդ մասը (միջնակարգ դպրոցների համար), հրապարակի վրա մինչև վերջերս չկար ծավալուն, ընդհանրացնող ուսումնասիրություն, որը բուհերի պատմության ֆակուլտետների ուսանողների համար դասագիրք ծառայեր։ Սակայն հարկ է նշել, որ վերջին երկու տասնամյակում մեր պատմաբանների ուշադրության կենտրոնում են եղել հայ ժողովրդի նոր պատմության այնպիսի կարևոր պրոբլեմներ, ինչպիսիք են հայ-ռուսական հարաբերությունները, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, հայ հասարակական հոսանքները, ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, գյուղացիական ռեֆորմը Հայաստանում, ագրարային հարաբերությունները և հողային հարցը Արևելյան Հայաստանում, հեղափոխական շարժումները Արևելյան Հայաստանում, արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը սուլթանական բռնապետության դեմ, արևմտահայերի հասարակական հոսանքները, սոցիալ-տնտեսական ո. քաղաքական կացությունը, հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը։ Թվարկված պրոբլեմների մասին լույս են տեսել մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ, փաստաթղթերի ժողովածուներ, որոնք արժեքավոր լինելով հանդերձ, չեն կարող ամբողջական պատկերացում տալ հայ ժողովրդի երկու հատվածների XIX. դարի և XX դարի երկու տասնամյակի պատմության մասին։

Այդ տեսակետից «Լույս» հրատարակչության վերջերս հրատարակած՝ պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի ստվարածավալ «Հայ ժողովրդի պատմության» երրորդ հատորը (1801—1917 թթ.), (որը դասագիրք է բուհերի ուսանողների համար) արժեքավոր մենագրություն է և լուրջ ներդրում հայագիտության մեջ։ Պրոֆ. Պարսամյանի այս աշխատությունը մեր ժողովրդի նոր ժամանակահատվածի խորը գիտական, սիստեմատիկ պատմություն է։

Այսպիսի մենագրության ստեղծումը հնարավոր էր միայն սովետահայ պատմագրությանն ընձեռված այսօրվա լայն հնարավորությունների պայմաններում՝ պատմական ատաղձի ստեղծումից հետո, երբ պատմաբանը կարող է անցյալում արտահայտված անհատի պաշտամունքի դրոշմը կրող տեսակետները համարձակորեն վերանայել, անհարկի աղավաղված պատմական դեմքերին ու դեպքերին տալ ճիշտ գնահատականներ, մերժել վուլգար սոցիոլոգների կողմից հայագիտության վրին փաթաթված միասնական հոսանքի դոգմաները, կիրառել պատմականության սկզբունքը։

Պրոֆ. Պարսամյանն իր աշխատանքը շարադրելիս ուղեցույց է ունեցել մարքսիզմի կլասիկների աշխատությունները, հատկապես Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի ու Վ. Ի. Լենինի դրույթները, որոնք օգնել են նրան տակավին չուսումնասիրված կամ վիճելի մի շարք պրոբլեմներ լուծելու, տալով նրանց ոչ թե փաստագրական, այլ անալիտիկ շարադրանքը։

---

1 Վ. Ա. Պարսամյան, Հայ ժողովրդի պատմություն, հատոր երրորդ, Երևան, 1967։

Վ. Ա. Պարսամյանը օգտագործել է նախասովետական ու սովետական պատմագրության ձեռք բերած նվաճումները, դրվատել, գնահատել կամ քննադատել պատմագրության մեջ տեղ գտած գանազան տեսակետները, շարունակել է գիտական պրպտումները և հանգել նոր եզրակացություններին։ Այդ բոլորը վկայում են այն մասին, որ գրախոսվող գիրքը ոչ թե սովորական դասագիրք է, այլ լուրջ մենագրություն։

Մենագրության ամենակարևոր արժանիքներից մեկը հեղինակի օգտագործած աղբյուրներն են, Սովետական Միության տարբեր արխիվներից հավաքած նյութերը, որոնց մի զգալի մասը առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվել։ Այս ևս իրավունք է տալիս ասելու, որ օգտագործելով համալսարանական կուրս ստեղծելու իրեն տրված իրավունքն ու հնարավորությունները, պրոֆ. Պարսամյանը փաստորեն գիտահետազոտական աշխատանք է կատարել և տվել նոր ժամանակաշրջանի հայ ժողովրդի փաստաստ ու քննական պատմության ընթացքը։

Մեր կարծիքով ճիշտ է աշխատության պերիոդիզացիան։ Մենագրության հեղինակը 1800—1917 թվականներն ընդգրկող ժամանակաշրջանը բաժանում է երեք բաժնի. այն է՝ ա) Հայաստանը XIX դարի առաջին կեսին, բ) ֆեոդալական հարաբերությունների քայքայումը և կապիտալիզմի զարգացումը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես), գ) Հայաստանը իմպերիալիզմի և բուրժուա-դեմոկրատական տեղափոխությունների ժամանակաշրջանում։

Մենագրության առաջին բաժնում պրոֆ. Պարսամյանը բնութագրում է Հայաստանի արևելյան և արևմտյան հատվածների դժնդակ սոցիալ-քաղաքական կացությունը, ցույց տալիս հայերի իրավա-քաղաքական անտանելի դրությունը, հանգամանալից շարադրում է ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների պատմությունը, ցույց տալիս Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու բախտորոշ ակտի նշանակությունը և այլն։

Մենագրության այս բաժնում լայնորեն լուսաբանված են գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում, նոր փաստերով ու հետաքրքիր ձևերով ներկայացված է Արևմտյան Հայաստանի, Կոստանդնուպոլսի հայ գաղութի պատմությունը XIX դարի առաջին կեսին։ Ամբողջովին նորություն է Թուրքիայի մայրաքաղաքում ծավալված արհեստավորական ցույցերի պատմությունը XIX դարի 20—40-ական թվականներին։ Բաժինը եզրափակվում է հայկական մշակույթին նվիրված ընդարձակ ու հետաքրքիր գլխով, որն ընդգրկում է հայկական մշակույթի ամենատարբեր բնագավառները։ Արժեքավոր են պատմագիտությանը նվիրված էջերը։

Երկրորդ բաժինը բացվում է Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը բացահայտող բովանդակալից գլխով, որտեղ պատմաբանը իր համար բաղա է ստեղծել հայ ազգային-ազատագրական շարժումների, առավել ևս հասարակական-քաղաքական հոսանքների դիմապատկերը պարզելու, ինչպես շարժումների, այնպես էլ հոսանքների առաջադիմական, համազգային բնույթը գնահատելու, յուրաքանչյուր հոսանքին պատկանող գործչի աշխարհայացքը ցույց տալու համար։

Պրոֆ. Վ. Ա. Պարսամյանը վերագնահատել է արևմտահայերի ազգային սահմանադրությունը, իրավացիորեն մերժել թե՛ նրանց տեսակետը, ովքեր գերագնահատել են այդ ակտը և թե՛ նրանց, ովքեր թերագնահատել են այդ սահմանադրությունը։ Ազգային սահմանադրությունը իրավացիորեն դիտվում է որպես ֆեոդալական, բարբարոսական Թուրքիայի պայմաններում ժողովրդի երկարատև պայքարի գնով նվաճված մի փաստաթուղթ, որը առաջադիմական նշանակություն է ունեցել Արևմտյան Հայաստանի և Թուրքիայի հայկական գաղթօջախների ներքին կյանքը տնօրինելու հարցում։

1870-ական թվականները Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում նշանավորվում են կապիտալիստական հարաբերությունների զարգացումով, եզրափակվում ռուս-թուրքական պատերազմով, հայկական հարցի շուրջը մղվող երկարատև գոտեմարտերով, սուլթանական բռնապետության դեմ բարձրացող հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նոր վերելքով։ Բոլոր այս խնդիրները հանգամանորեն քննարկվում են գրախոսվող մենագրության առանձին գլուխներում։

1880-ական թվականներին ազատագրական շարժման աննախընթաց վերելքի պայմաններում Արևմտյան Հայաստանում հիմնվում են գաղտնի հեղափոխական կազմակերպություններ, զարգանում է ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը, բաղա է ստեղծվում ազգային-քաղաքական կուսակցությունների հիմնադրման համար։ Հեղինակը այս առիթով կանգ է առնում արմենականների, հնչակյանների և դաշնակցության հիմնադրման շարժառիթների վրա, ցույց տալիս նրանց դասակարգային ակունքները, այդ կուսակցություններին պատկանող բազմաթիվ գործիչների խաղացած դերը հայ ազատագրական շարժման մեջ։ Փաստերի

մեկնարանումից և եզրահանգումներից երևում է, որ հեղինակը մերժելով ժամանակին տիրող դոգմատիզմը, հայ ազգային-քաղաքական կուսակցություններին գնահատելիս ցուցաբերում է պատմական կոնկրետ մոտեցում, ելնում է ոչ թե նրանց տրված բայլսական գնահատականից, կամ դրվատանքից, այլ նրանց ծավալած գործունեությունից, այդ գործունեության առաջադիմական կամ հետադիմական հետևանքներից։

Խոսելով դաշնակցական կուսակցության մասին, նա նշում է, որ վերջինիս հիմնադրումից, այսինքն XIX դարի 90-ական թվականներից մինչև 1903 թվականը այն իր ամբողջ գործունեությունը կենտրոնացրել էր Արևմտյան Հայաստանում։ Այդ տարիներին դաշնակցությունը հանդես էր գալիս որպես «ազգային» կուսակցություն, մերժելով դասակարգային պայքարի գաղափարը՝ իր գոյության նպատակը համարելով «Հայոց հարցիս լուծումը։

Սակայն, 1905—1907 թվականների ռուսական հեղափոխության տարիներին, երբ հայ ժողովրդի առաջադիմական շրջանները ակտիվ մասնակցություն ունեցան հեղափոխությանը, դաշնակցությունը որպեսզի չկորցնի իր հենակետը, իրեն հայտարարեց սոցիալիստական կուսակցություն։ «Նա աշխատում էր հավատացնել հասարակությանը,— գրել է Ստ. Շահումյանը,— թե ինքը երբեք ազգային պարտիա չի եղել, թե ընդհակառակը, միշտ էլ եղել է դասակարգային և սոցիալիստական պարտիա»։ Սոցիալիզմի դիմակ հագնելով՝ նա (դաշնակցությունը —Ե. Ս.) — շարունակում է Ստ. Շահումյանը,— ամենավճռական պայքարն է մղում սոցիալիզմի դեմ, բանվորական շարժման դեմ Կովկասում»։ «Նա մինչև այժմ անվանվում էր «հեղափոխական» պարտիա, որպեսզի 15 տարի շարունակ մարտնչի ռևոլյուցիայի դեմ» (Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 290)։

Որոշակիորեն տարբերելով հայ ազգային-քաղաքական կուսակցությունները իրարից՝ հրնչակը ռամկավարից և վերջիններս դաշնակցականներից, ցույց տալով այդ կուսակցությունների՝ տարբեր դասակարգերի պատկանելիությունը, պրոֆ. Պարսամյանը միաժամանակ նշում է այն դրական և առաջադիմական դերը, որ խաղում են հնչակյան և ռամկավար կուսակցությունները ժամանակակից Սփյուռքում, նրանք ակտիվ մասնակցում են ազգային-ազատագրական գաղափարների պրոպագանդմանը, հատկապես Մերձավոր արևելքի երկրներում, կանգնած են Սովետական Հայաստանի, խաղաղության լագերի պաշտպանության դիրքերում։ Ռամկավարները, հնչակյանները մյուս առաջադիմական ուժերի հետ միացած պայքարում են աշխարհով մեկ ցրված հայ աշխատավորության արդար դատի համար (էջ 327)։

Քննարկելով հնչակյանների ու ռամկավարների գաղափարական ու ծրագրային գրությունները, հեղինակը մատնանշում է, որ այդ կուսակցությունների տատանողականությունն ու անհետևողականությունը պայմանավորված են նրանց դասակարգային էությամբ, որ բնորոշ են մանր-բուրժուական կուսակցություններին։

Բաժինը եզրափակվում է Արևելյան Հայաստանում և ընդհանրապես արևելահայության մեջ զարգացող բուրժուական հարաբերությունների վերելքով, բանվոր դասակարգի ձևավորմամբ և, որ ամենից կարևորն է, մարքսիզմի տարածման պատմությանը նվիրված, նոր նյութ պարունակող գլուխներով։ Այս բաժնի վերջին գլուխը նվիրված է XIX դարի երկրորդ կեսի մշակույթին (գրականությանը, արվեստին, պատմագրությանը, պարբերական մամուլին և այլն)։

Պատմաբանը սեղմ էջերով անդրադարձել է «Բանվորական ասոցիացիայի», 1898 թ. կազմված «Թիֆլիսի բանվորական միության» և մարքսիստական այլ խմբակների, նրանց ուղղություն տվող հայ սոցիալ-դեմոկրատ հեղափոխականների գործունեությանը։ Ի տարբերություն նախորդների, պատմական այս կարևոր դեպքերը շարադրելիս պրոֆ. Պարսամյանը տեղ է տվել այն դեմքերին, որոնք հանիրավի մոռացված են եղել անհատի պաշտամունքի տարիներին։ Բազմաթիվ գործիչների անունները նվիրական սրբությամբ դրոշմվում են նրա գրքի էջերում, ոչ իբրև անհատականություններ, այլ ընդհանուր շղթայի մեջ կապակցված։

Մենագրություն-ձեռնարկի վերջին բաժինը բովանդակում է Հայաստանի ավելի բարդ ու հակասական, ավելի հերոսական ու ողբերգական մի ժամանակաշրջան՝ այսինքն իմպերիալիզմի դարաշրջանը։ Նրա գրքի էջերում խոսվում է հայ պրոլետարիատի կրած սոցիալ-քաղաքական ճնշումների, ցարիզմի վարած գաղութային քաղաքականության ուժեղացման մասին, ցույց տալիս ռուսական հեղափոխությանը այդ նույն բանվորների զինվորագրման պատմությունը, հայերի ունեցած մասնակցությունը վերելք ապրող բանվորական շարժումներին ոչ միայն Հայաստանի արևելյան հատվածում, այլև նավթային Բաքվում, գործարանային Թիֆլիսում, Մոսկվայում, Պետերբուրգում և Ռուսաստանի այն վայրերում, որտեղ հայ դանգված կար, որտեղ հեղափոխության կայծերն էին տարածվել։

Արևելյան Հայաստանում ստոլիպինյան ռեակցիայի ծանր տարիների պատմությունը շարադրելուց հետո Վ. Ա. Պարսամյանն անցնում է 1912—1914 թթ. հայկական հարցի շուրջը մղվող պայքարին, բացահայտում այդ բարդ երևույթի ներքին էությունը, քողազերծում մեծ պետությունների բռնած երկդիմի դիրքը այդ խնդրի հանդեպ։

Աշխատության ամենաարժեքավոր գլուխներից մեկը նվիրված է առաջին համաշխարհային պատերազմի, արևմտահայության տեղահանության ու ոչնչացման, հայկական կամավորական խմբերի ստեղծման, հայերի հերոսական ինքնապաշտպանությունների կազմակերպման պատմությանը։ Հեղինակը ճիշտ է դրվատում զորավար Անդրանիկի, Աղբյուր Սերոբի, Գևորգ Չաուշի, Քեռու, Վարդանի և շատ ուրիշների գործունեությունը թուրքական դեսպոտիզմի դեմ՝ նրանց մղած արդարացի ու հերոսական պայքարում։

Գրքի վերջին գլուխներում լուսաբանվում են Փետրվարյան հեղափոխության արձագանքները Հայաստանում, ինչպես նաև XIX դարի սկզբի հայկական մշակույթը։

Գրքին կցված է գրականության, կարևոր տարեթվերի, անձնանունների ու տեղանունների ցանկ, ինչպես նաև հետաքրքիր քարտեզներ։

Ձեռնարկի ամենակարևոր արժանիքներից մեկը պետք է համարել այն, որ նրա հեղինակը ակտիվ վերաբերմունք ունի եղած սխալ կոնցեպցիաների նկատմամբ, ջանում է ճշտել ոչ միայն թույլ տրված ակնառու խոշոր սխալները, այլև ամենամանր դեպքերի, թվերի աղավաղումները։ Այս իսկ տեսանկյունից նայելով է, որ մենք գնահատում ենք սույն գիրքը ոչ միայն որպես ուսումնական ձեռնարկ, այլև քննական պատմություն։

Աշխատությունը զերծ չէ նաև թերություններից։

Օրինակ, մի շարք պարբերականներ ներկայացվում են անուններով, սակայն չի շեշտվում, թե դրանք ո՞ր հոսանքին են պատկանել։ Կան նաև վիճարկություն վերցնող տեսակետներ։

Չնայած այս թերություններին, պրոֆ. Վ. Ա. Պարսամյանի գիրքը նյութի ընդգրկումով, հարցերի բազմակողմանի լուսաբանությամբ, սահուն լեզվով մի նոր ներդրում է հայ պատմագրության մեջ։ Խիստ անհրաժեշտ է այն թարգմանել և հրատարակել նաև ռուսերեն և դրանով իսկ ռուս ընթերցողին հնարավորություն տալ լիարժեք պատկերացում կազմելու հայ ժողովրդի պատմության այդ բարդ ժամանակաշրջանի մասին։

Պրոֆ. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ